

61 Որ եւ վաղ ընդ փոյթ յարքունեաց անտի
 Չեռամբ Ղազարու նաեւ Պետրոսի
 Խընդրէր զերծման գիր սադրեալ Սարգսի,
 Որ եւ շընորհիւր նմա շեշտակի:

62 Նաեւ յայնս աւուրս զՍարգիս կարգէր նա
 Արքեպիսկոպոս Հայոց Եւդոկեայ,
 Ձոր եւ հաստէր յայն նոյն իսկ փոխարքայ
 Հըրովարտակաւ որպէս օրէն կայ:

63 Յակոբ զայս առնէր սոյն դիտմամբ եւեթ,
 Թէ այլուր երթեալ Սարգիս վարդապետ
 Ոչ եւս ի Պօլիս գըտցի նորուն հետ,
 Ձի ճօրագ նախանձուն զեռ ունէր բղձեթ:

64 Յետ որոյ Յակոբ լուր պարետաւոր
 Գըրէր Սարգսի պատմութեամբ բոլոր,
 Որում առաքէր զարքունեաց շընորհ,
 Որ առ զերծմանն էր եւ հովուութեան նոր:

65 Ձոր եւ յորդորէր ռահ գործել անտի
 Առ Եւդոկիայ ուղւով ուղղակի,
 Ուր, ասէր, մընայ հօտն այն անուանի
 Ի համբուրել զաջ նոր հովուիդ քաջի:

66 Ընկալեալ Սարգիս նոյն ծըրար թղթոյ՝
 Ընդ որ եւ թուղթս ինչ իշխանաց մերոյ
 Ընթերցմամբ որոց տածիւր սըրտին խոց
 Գոհութիւն ձօնեալ Տեառն արարածոց:

67 Ապա հանդերձեալ անդէն առ նըմին
 Երթայր ի պալատ իրաւարարին,
 Յոր պատճէն զերծման հըրովարտակին՝
 Օրինակել տայր արձանագրին: